

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
«AM» ԵՎ «ՀԱՅ» ԴՈՄԵՆԱՅԻՆ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՏԻՐՈՒՅԹՆԵՐՈՒՄ
ԴՈՄԵՆԱՅԻՆ ԱՆՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ

1. ՄԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

1. Սույն քաղաքականության մեջ օգտագործված հասկացություններն են.

1) **«Internet Corporation for Assigned Names and Numbers» կազմակերպություն կամ «ICANN» կազմակերպություն`** կազմակերպություն, որը պատվիրակում է ընդհանուր (gTLD), երկրների կոդերի (ccTLD) և միջազգայնացված (IDN) վերին մակարդակի դոմենային անունների տիրույթները.

2) **Ռեգիստր`** «Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպություն, որին «ICANN» կազմակերպությունը պատվիրակել է կառավարել «.am» և «.hay» վերին մակարդակի դոմենային անունների տիրույթները.

3) **Ռեգիստրի առևտրային օպերատոր`** Ռեգիստրի կողմից լիազորված առևտրային կազմակերպություն, որը Ռեգիստրարներին մատուցում է Ռեգիստրի տվյալների շտեմարանին առցանց հասանելիության ապահովման ծառայություններ.

4) **Ռեգիստրի տեխնիկական օպերատոր (Հայաստանի ցանցային տեղեկատվական կենտրոն AM NIC)`** Ռեգիստրի կողմից լիազորված կազմակերպություն, որն ապահովում է «.am» և «.hay» դոմենային անունների տիրույթներում ծրագրային-ապարատային (ցանցային) համալիրի անխափան աշխատունակությունը, ինչպես նաև տարածում է Ռեգիստրի տվյալների շտեմարանում գրանցված դոմենային անուններն ինտերնետում օգտագործելու համար անհրաժեշտ տեղեկատվությունը.

5) **Ռեգիստրար`** Հայաստանի Հանրապետությունում գրանցված և Ռեգիստրի կողմից հավատարմագրված իրավաբանական անձ, որը Ռեգիստրի առևտրային օպերատորի հետ կնքված սույն կետի 3-րդ ենթակետում նշված ծառայությունների մատուցման պայմանագրի առկայության պարագայում «.am» և (կամ) «.hay» դոմենային անունների տիրույթներում մատուցում է դոմենային անունների գրանցման ծառայություններ (իրականացնում է դոմենային անվան գրանցում և վերագրանցում Ռեգիստրի տվյալների շտեմարանում).

6) **Գրանցող (Domain name holder)`** քաղաքացիաիրավական պայմանագիր կնքելու իրավասությամբ օժտված սուբյեկտ, որը Ռեգիստրարի, իսկ սույն քաղաքականությամբ սահմանված դեպքերում` Ռեգիստրի միջոցով Ռեգիստրի տվյալների շտեմարանում գրանցել է (վերագրանցել է) «.am» կամ «.hay» դոմենային անունների տիր-

րույթի երկրորդ մակարդակի դոմենային անուն (օրինակ՝ «isoc.am») կամ «.com.am», «.co.am», «.org.am», «.net.am», «.commune.am», «.համայնք.հայ» երրորդ մակարդակի դոմենային որևէ անուն (օրինակ՝ «isoc.com.am» կամ «isoc.net.am»).

7) **Ռեգիստրի տվյալների շտեմարան**՝ շտեմարան, որը պարունակում է տեղեկատվություն «.am» և «.հայ» դոմենային անունների տիրույթներում գրանցված դոմենային անունների մասին, ինչպես նաև այլ պարտադիր տեղեկատվություն, որն անհրաժեշտ է դոմենային անունների աշխատունակությունն ապահովելու համար.

8) **«Whois» ծառայություն**՝ Ռեգիստրի տվյալների շտեմարանից հանրության համար հասանելի փնտրման համակարգի միջոցով դոմենային անվան մասին տեղեկատվության տրամադրում.

9) **Դոմենային անվան համակարգի սերվեր (DNS server)**՝ ծրագրային-ապարատային (ցանցային) համալիր, որն ապահովում է դոմենային անունների փոխակերպումը ցանցային հասցեների (IP հասցեներ).

10) **Անձնական տվյալ**՝ ֆիզիկական անձին վերաբերող ցանկացած տեղեկություն, որը թույլ է տալիս կամ կարող է թույլ տալ ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել անձի ինքնությունը:

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

2. Սույն քաղաքականությունը սահմանում է Ռեգիստրի տվյալների շտեմարանում դոմենային անունների գրանցման և վերագրանցման կարգը, ինչպես նաև գրանցումը (վերագրանցումը) չեղյալ ճանաչելու կարգը:

3. Ռեգիստրի տվյալների շտեմարանում գրանցվում են (վերագրանցվում են) «.am» և «.հայ» դոմենային անունների տիրույթների երկրորդ մակարդակի դոմենային անունները և «.com.am», «.co.am», «.org.am», «.net.am», «.commune.am», «.համայնք.հայ» երրորդ մակարդակի դոմենային անունները:

4. Ռեգիստրի տվյալների շտեմարանում դոմենային անունների գրանցումն (վերագրանցումն) իրականացնում են՝

1) Ռեգիստրարները, որոնց ցանկը հրապարակվում է www.isoc.am, www.itc.am և www.amnic.net ինտերնետային կայքերում,

2) Ռեգիստրը՝ սույն քաղաքականությամբ նախատեսված դեպքերում:

5. Ռեգիստրը գրանցում է (վերագրանցում է)՝

1) սույն քաղաքականության 14-րդ և 16-րդ կետերում նշված ցանկերում ներառված դոմենային անունները,

2) այն դոմենային անունները, որոնց Գրանցող դառնալու համար իրեն է դիմել Ռեգիստրի առևտրային օպերատորը,

3) այն դոմենային անունները, որոնց Գրանցող դառնալու համար իրեն է դիմել Ռեգիստրի տեխնիկական օպերատորը,

4) դումենային անուններ՝ «.am» և «.հայ» դումենային անունների տիրույթների զարգացման նպատակով: (4-րդ ենթակետը լրաց. 07.02.18թ. N41, հրաման)

3. ԴՈՄԵՆԱՅԻՆ ԱՆՎԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆԱԽԱՊԱՅՄԱՆԸ

6. Ռեգիստրի տվյալների շտեմարանում Ռեգիստրարների կամ Ռեգիստրարների անունից հանդես եկող անձանց կողմից դումենային անունների գրանցում իրականացնելու համար պարտադիր նախապայման է տվյալ դումենային անվան Գրանցորդ դառնալու ցանկություն ունեցող քաղաքացիաիրավական պայմանագիր կնքելու իրավասությամբ օժտված սուբյեկտի հետ կնքված՝ «.am» կամ «.հայ» դումենային անունների տիրույթում դումենային անունների գրանցման ծառայությունների մատուցման վերաբերյալ պայմանագրի առկայությունը:

7. Դումենային անունների գրանցման ծառայությունների մատուցման վերաբերյալ պայմանագրի առկայություն չի պահանջվում, եթե տվյալ դումենային անվան Գրանցորդ է ցանկանում դառնալ Ռեգիստրարը՝ պայմանով, որ տվյալ դումենային անվան գրանցումն իրականացվում է անձամբ նրա կողմից:

4. ԴՈՄԵՆԱՅԻՆ ԱՆՎԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐ

8. Ռեգիստրի տվյալների շտեմարանում «.am» դումենային անունների տիրույթի դումենային անվան գրանցման համար դումենային անունը պետք է բավարարի հետևյալ տեխնիկական պահանջները՝

1) դումենային անունը պետք է ավարտվի «.am» վերջավորությամբ,

2) դումենային անվան մեջ պետք է օգտագործվեն միայն թույլատրելի գրանշաններ (symbols): Թույլատրելի գրանշաններն են՝

ա. լատինական տառատեսակի փոքրատառերը (a, b, c, d, e, f, g, h, i, j, k, l, m, n, o, p, q, r, s, t, u, v, w, x, y, z),

բ. 0-9 ներառյալ լատինական տառատեսակի թվերը,

գ. լատինական տառատեսակի գծիկը՝ - ,

3) երկրորդ մակարդակի դումենային անվան մեջ բաժանիչ կետը («.am» վերջավորության մեջ նշված կետը), իսկ «.com.am», «.co.am», «.org.am», «.net.am», «.commune.am» երրորդ մակարդակի դումենային անունների մեջ բաժանիչ կետերը («.am» վերջավորության մեջ նշված կետը և «.am» վերջավորության մեջ նշված կետին նախորդող կետը) պետք է լինեն լատինական տառատեսակի,

4) երկրորդ մակարդակի դումենային անվան «.am» վերջավորությանը նախորդող հատվածում (label) գրանշանների քանակը չպետք է գերազանցի 63-ը, («.am» վերջավորությանը նախորդող հատվածը չի ներառում «www.», «ftp.», «http://» և ինտեր-

նետում օգտագործվող նմանատիպ այլ հապավումներ, նախամասնիկներ, արձանագրություններ և այլն),

5) երկրորդ մակարդակի դոմենային անվան «.am» վերջավորությանը նախորդող հատվածը (label) չպետք է սկսվի լատինական տառատեսակի գծիկով կամ պարունակի երկու անընդմեջ լատինական տառատեսակի գծիկ,

6) «.com.am», «.co.am», «.org.am», «.net.am», «.commune.am» երրորդ մակարդակի դոմենային անունների համապատասխանաբար «.com.am», «.co.am», «.org.am», «.net.am», «.commune.am» մասերին նախորդող հատվածում (label) գրանշանների քանակը չպետք է գերազանցի 63-ը («.com.am», «.co.am», «.org.am», «.net.am», «.commune.am» մասերին նախորդող հատվածը չի ներառում «www.», «ftp.», «http://» և ինտերնետում օգտագործվող նմանատիպ այլ հապավումներ, նախամասնիկներ, արձանագրություններ և այլն),

7) «.com.am», «.co.am», «.org.am», «.net.am», «.commune.am» երրորդ մակարդակի դոմենային անունների համապատասխանաբար «.com.am», «.co.am», «.org.am», «.net.am», «.commune.am» մասերին նախորդող հատվածը (label) չպետք է սկսվի լատինական տառատեսակի գծիկով կամ պարունակի երկու անընդմեջ լատինական տառատեսակի գծիկ:

9. Ռեգիստրի տվյալների շտեմարանում «.հայ» դոմենային անունների տիրույթի դոմենային անվան գրանցման համար դոմենային անունը պետք է բավարարի հետևյալ տեխնիկական պահանջները՝

1) դոմենային անունը պետք է ավարտվի «.հայ» վերջավորությամբ,

2) դոմենային անվան մեջ պետք է օգտագործվեն միայն թույլատրելի գրանշաններ (symbols): Թույլատրելի գրանշաններն են՝

ա. հայկական յունիկոդ (armenian unicode) կոդավորմամբ «L» գրանշանը,

բ. հայկական յունիկոդ (armenian unicode) կոդավորմամբ հայոց այբուբենի փոքրատառերը, բացառությամբ «և», «ու» տառերի (ա, բ, գ, դ, ե, զ, ը, թ, ժ, ի, լ, խ, ծ, կ, հ, ձ, ղ, ճ, մ, յ, ն, շ, ո, ջ, պ, ջ, ո, ս, վ, տ, ր, ց, փ, ք, օ, ֆ): «և» տառի փոխարեն անհրաժեշտ է օգտագործել «ե» տառը և «L» գրանշանը, իսկ «ու» տառի փոխարեն՝ «ո» տառը և «L» գրանշանը,

գ. 0-9 ներառյալ լատինական տառատեսակի թվերը,

դ. լատինական տառատեսակի գծիկը՝ - ,

3) երկրորդ մակարդակի դոմենային անվան մեջ բաժանիչ կետը («.հայ» վերջավորության մեջ նշված կետը), իսկ «.համայնք.հայ» երրորդ մակարդակի դոմենային անվան մեջ բաժանիչ կետերը («.հայ» վերջավորության մեջ նշված կետը և «.հայ» վերջավորության մեջ նշված կետին նախորդող կետը) պետք է լինեն լատինական տառատեսակի,

4) երկրորդ մակարդակի դոմենային անվան «.հայ» վերջավորությանը նախորդող հատվածում (label) գրանշանների քանակը՝ փոխակերպված <https://www.punycoder.com> ինտերնետային կայքում բերված «Punycode» փոխարկիչով

(converter), չպետք է գերազանցի 63-ը («.հայ» վերջավորությանը նախորդող հատվածը չի ներառում «www.», «ftp.», «http://» և ինտերնետում օգտագործվող նմանատիպ այլ հապավումներ, նախամասնիկներ, արձանագրություններ և այլն),

5) երկրորդ մակարդակի դոմենային անվան «.հայ» վերջավորությանը նախորդող հատվածը (label) չպետք է սկսվի լատինական տառատեսակի գծիկով կամ պարունակի երկու անընդմեջ լատինական տառատեսակի գծիկ,

6) «.համայնք.հայ» երրորդ մակարդակի դոմենային անվան «.համայնք.հայ» մասին նախորդող հատվածում (label) գրանշանների քանակը՝ փոխակերպված <https://www.punycoder.com> ինտերնետային կայքում բերված «Punycode» փոխարկիչով (converter), չպետք է գերազանցի 63-ը («.համայնք.հայ» մասին նախորդող հատվածը չի ներառում «www.», «ftp.», «http://» և ինտերնետում օգտագործվող նմանատիպ այլ հապավումներ, նախամասնիկներ, արձանագրություններ և այլն),

7) «.համայնք.հայ» երրորդ մակարդակի դոմենային անվան «.համայնք.հայ» մասին նախորդող հատվածը (label) չպետք է սկսվի լատինական տառատեսակի գծիկով կամ պարունակի երկու անընդմեջ լատինական տառատեսակի գծիկ:

10. Դոմենային անվան մեջ բաժանիչ կետերը չեն հանդիսանում գրանշան:

5. ԳՐԱՆՑՄԱՆ ՈՉ ԵՆԹԱԿԱ ԴՈՄԵՆԱՅԻՆ ԱՆՈՒՆԵՐ

11. Արգելվում է գրանցել իրենցից մարդու սեռով կամ ռասայով, կամ մաշկի գույնով, կամ էթնիկ կամ սոցիալական ծագումով, կամ գենետիկական հատկանիշներով, կամ լեզվով, կամ կրոնով, կամ տարիքով, կամ այլ անձնական կամ սոցիալական բնույթի հանգամանքներով պայմանավորված խտրականություն ներկայացնող, կամ մարդու արժանապատվությունն այլ կերպ նվաստացնող, կամ բռնություն կամ պատերազմ քարոզող, կամ քրեորեն պատժելի կամ գործող օրենսդրությամբ արգելված արարքների կոչեր տարածող, կամ հայիոյանք ներկայացնող, կամ բարոյականության սկզբունքներին այլ կերպ հակասող, կամ հանրային շահին չհամապատասխանող դոմենային անուններ: *(11-րդ կետը խմբ. 25.05.18թ. N16L հրաման)*

12. *(12-րդ կետն ուժը կորց. 25.05.18թ. N16L հրաման):*

13. *(13-րդ կետն ուժը կորց. 25.05.18թ. N16L հրաման):*

6. ԴՈՄԵՆԱՅԻՆ ԱՆՈՒՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՄԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ

14. Ռեգիստրը սահմանում է դոմենային անունների ցանկ, որում ներառված դոմենային անունների Գրանցորդներ կարող են հանդիսանալ միայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ նախատեսված պետական մարմինները (այսուհետ՝ **Կառավարական դոմենային անունների ցանկ**): Կառավարական դոմենային անունների ցանկը, ի թիվս այլ անունների, ներառում է «armenia.am», «armenia.com.am»,

«armenian.com.am», «armenia.co.am», «armenian.co.am», «armenia.org.am», «armenian.org.am», «armenia.net.am», «armenian.net.am», «հայաստան.հայ», «հայ.հայ», «հայկական.հայ» դոմենային անունները:

15. «commune.am» և «համայնք.հայ» երրորդ մակարդակի դոմենային անունների Գրանցորդներ կարող են հանդիսանալ միայն Հայաստանի Հանրապետության համայնքները:

16. Իր ծառայողական կարիքները հոգալու անհրաժեշտությունից ելնելով՝ Ռեգիստրը սահմանում է դոմենային անունների ցանկ, որում ներառված դոմենային անունների Գրանցորդ կարող է հանդիսանալ միայն Ռեգիստրը (այսուհետ՝ **Ռեգիստրի կարիքների համար նախատեսված դոմենային անունների ցանկ**): Ռեգիստրի կարիքների համար նախատեսված դոմենային անունների ցանկում ներառված դոմենային անունների քանակը չպետք է գերազանցի ողջամտության սահմանը: Ռեգիստրի կարիքների համար նախատեսված դոմենային անունների ցանկը, ի թիվս այլ անունների, ներառում է «.am» կամ «.հայ» վերջավորությանը նախորդող հատվածում մեկ գրանշան պարունակող երկրորդ մակարդակի դոմենային անունները՝ սույն քաղաքականության 55-րդ կետում սահմանված վերապահումով: Ռեգիստրի կարիքների համար նախատեսված դոմենային անունների ցանկը հրապարակվում է www.isoc.am, www.itc.am և www.amnic.net ինտերնետային կայքերում:

7. ԴՈՄԵՆԱՅԻՆ ԱՆՎԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ

17. Դոմենային անվան գրանցումն իրենից ներկայացնում է Ռեգիստրի տվյալների շտեմարանում դոմենային անվան և դոմենային անվան աշխատունակությունն ապահովելու համար սույն քաղաքականության 18-րդ կետում նշված տեղեկությունների մուտքագրում:

18. Դոմենային անվան մուտքագրման հետ միաժամանակ, դոմենային անվան աշխատունակությունն ապահովելու համար, Ռեգիստրի տվյալների շտեմարանում մուտքագրվում են հետևյալ տեղեկությունները՝

1) տվյալ դոմենային անվան Գրանցորդ դառնալու ցանկություն ունեցող ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հաշվառման կամ բնակության վայրը (հասցեն), փոստային ինդեքսը,

2) տվյալ դոմենային անվան Գրանցորդ դառնալու ցանկություն ունեցող՝ ֆիզիկական անձ չհանդիսացող քաղաքացիաիրավական պայմանագիր կնքելու իրավասությամբ օժտված սուբյեկտի անվանումը, գտնվելու վայրը (իրավաբանական հասցեն), փոստային ինդեքսը, իրավաբանական անձ հանդիսանալու դեպքում՝ կազմակերպական-իրավական ձևը, այլ սուբյեկտ հանդիսանալու դեպքում՝ իրավական կարգավիճակը,

3) տվյալ դոմենային անվան Գրանցորդ դառնալու ցանկություն ունեցող քաղաքացիաիրավական պայմանագիր կնքելու իրավասությամբ օժտված սուբյեկտի վար-

չական, տեխնիկական և ֆինանսական կոնտակտների տվյալները (անուն, ազգանուն, էլեկտրոնային փոստի հասցե, հեռախոսահամար): Ընդ որում, տվյալ դոմենային անվան Գրանցորդ դառնալու ցանկություն ունեցող ֆիզիկական անձի դեպքում մուտքագրվում են այդ ֆիզիկական անձի տվյալները, եթե վերջինս օրենքով սահմանված կարգով չի լիազորել այլ անձի (անձանց) հանդես գալու որպես իր վարչական, տեխնիկական և ֆինանսական կոնտակտ,

4) Դոմենային անվան համակարգի սերվերի՝ նվազագույնը երկու, առավելագույնը՝ վեց անուն,

5) դոմենային անվան օգտագործման ժամկետը, որը չի կարող մուտքագրվել մեկ տարուց պակաս ժամկետով:

19. Դոմենային անունը համարվում է գրանցված Ռեգիստրի տվյալների շտեմարանում դոմենային անվան և դոմենային անվան աշխատունակությունն ապահովելու համար սույն քաղաքականության 18-րդ կետում նշված տեղեկությունների մուտքագրման պահից:

20. Դոմենային անվան գրանցումը մեկանգամյա գործողության կատարում է:

21. Դոմենային անվան գրանցման պահից Գրանցորդը դոմենային անվան գրանցման ժամկետի ընթացքում այդ դոմենային անվան նկատմամբ ձեռք է բերում սահմանափակ օգտագործման իրավունք՝ հաշվի առնելով սույն քաղաքականության մեջ ամրագրված պայմանները և սահմանափակումները: Դոմենային անվան գրանցումը չի կարող մեկնաբանվել որպես Գրանցորդի կողմից այդ դոմենային անվան նկատմամբ սեփականության կամ սույն քաղաքականության մեջ չնշված որևէ այլ իրավունքի ձեռքբերում: Ընդ որում, դոմենային անունը չի կարող օգտագործվել՝

1) պոռնոգրաֆիկ նյութերի տարածման նպատակով,

2) Հայաստանի Հանրապետության պետական սահմանների պաշտպանությանը, ներքին կայունությանը, ազգային անվտանգությանը վնասող և (կամ) Հայաստանի Հանրապետության դեմ ուղղված նյութերի տարածման նպատակով,

3) հանցագործության կատարման կոչեր պարունակող նյութերի տարածման նպատակով,

4) սպամի (spam) տարածման նպատակով,

5) այնպիսի ապրանքների և ծառայությունների վաճառքի նպատակով, որոնց շրջանառությունը կամ ազատ շրջանառությունն արգելված է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ (բացառությամբ այն դեպքերի, երբ Գրանցորդն ունի նման ապրանքների վաճառքի կամ ծառայությունների մատուցման թույլտվություն),

6) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ արգելված նյութերի տարածման նպատակով,

7) թրաֆիքինգի իրականացման կամ դրա իրականացմանն որևէ կերպ աջակցելու նպատակով:

8. ԴՈՄԵՆԱՅԻՆ ԱՆՎԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԵՐԺՈՒՄ

22. Ռեգիստրի կողմից Ռեգիստրի տվյալների շտեմարանում դոմենային անվան գրանցումը մերժվում է, եթե՝

1) Ռեգիստրի տվյալների շտեմարանում տվյալ դոմենային անունն արդեն իսկ գրանցված է, բացառությամբ սույն քաղաքականության 23-րդ կետում նշված դեպքի,

2) «.am» դոմենային անունների տիրույթի դոմենային անունը չի համապատասխանում սույն քաղաքականության մեջ նշված տեխնիկական պահանջներին,

3) «.hայ» դոմենային անունների տիրույթի դոմենային անունը չի համապատասխանում սույն քաղաքականության մեջ նշված տեխնիկական պահանջներին,

4) *(4-րդ ենթակետն ուժը կորց. 25.05.18թ. N16L հրաման),*

5) Կառավարական դոմենային անունների ցանկում ներառված դոմենային անվան Գրանցորդ է ցանկանում դառնալ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ նախատեսված պետական մարմին չհանդիսացող քաղաքացիաիրավական պայմանագիր կնքելու իրավասությամբ օժտված սուբյեկտը,

6) քաղաքացիաիրավական պայմանագիր կնքելու իրավասությամբ օժտված այլ սուբյեկտ ցանկանում է դառնալ Ռեգիստրի կարիքների համար նախատեսված դոմենային անունների ցանկում ներառված դոմենային անվան Գրանցորդ,

7) Ռեգիստրի տվյալների շտեմարանում մուտքագրված չեն կամ թերի են մուտքագրված տվյալ դոմենային անվան Գրանցորդ դառնալու ցանկություն ունեցող ֆիզիկական անձի մասին՝ սույն քաղաքականության 18-րդ կետի 1-ին ենթակետում նշված տեղեկությունները,

8) Ռեգիստրի տվյալների շտեմարանում մուտքագրված չեն կամ թերի են մուտքագրված տվյալ դոմենային անվան Գրանցորդ դառնալու ցանկություն ունեցող՝ ֆիզիկական անձ չհանդիսացող քաղաքացիաիրավական պայմանագիր կնքելու իրավասությամբ օժտված սուբյեկտի մասին՝ սույն քաղաքականության 18-րդ կետի 2-րդ ենթակետում նշված տեղեկությունները,

9) Ռեգիստրի տվյալների շտեմարանում մուտքագրված չեն կամ թերի են մուտքագրված սույն քաղաքականության 18-րդ կետի 3-5-րդ ենթակետերում նշված տեղեկությունները,

10) «.commune.am» կամ «.համայնք.հայ» երրորդ մակարդակի դոմենային անունների Գրանցորդ է ցանկանում դառնալ Հայաստանի Հանրապետության համայնք չհանդիսացող քաղաքացիաիրավական պայմանագիր կնքելու իրավասությամբ օժտված սուբյեկտը:

23. Ռեգիստրի տվյալների շտեմարանում տվյալ դոմենային անունն արդեն գրանցված լինելու հիմքով դոմենային անվան գրանցումն ենթակա չէ մերժման, եթե տվյալ դոմենային անվան նոր գրանցումն իրականացվում է այդ դոմենային անվան Գրանցորդի նախաձեռնությամբ՝ Գրանցորդի փոփոխություն կատարելու նպատակով:

**9. ՌԵԳԻՍՏՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՇՏԵՄԱՐԱՆՈՒՄ ԴՈՄԵՆԱՅԻՆ ԱՆՎԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ
ԺԱՄԿԵՏԸ**

24. Ռեգիստրի տվյալների շտեմարանում գրանցված դոմենային անվան պահպանման ժամկետն (այսուհետ՝ **Պահպանման ժամկետ**) որոշվում է Ռեգիստրի տվյալների շտեմարանում մուտքագրված տվյալ դոմենային անվան օգտագործման ժամկետի և Ռեգիստրի տվյալների շտեմարանում դոմենային անվան պահպանման համար սահմանված լրացուցիչ ժամկետի հանրագումարով: Ռեգիստրի տվյալների շտեմարանում դոմենային անվան պահպանման լրացուցիչ ժամկետը (այսուհետ՝ **Լրացուցիչ ժամկետ**) կազմում է 45 օր:

25. Դոմենային անվան գրանցումը (վերագրանցումը) սույն քաղաքականությամբ սահմանված հիմքերով չեղյալ ճանաչվելու դեպքում տվյալ դոմենային անունը վաղաժամկետ հեռացվում է Ռեգիստրի տվյալների շտեմարանից (դադարեցվում է Պահպանման ժամկետը):

10. ԴՈՄԵՆԱՅԻՆ ԱՆՎԱՆ ՎԵՐԱԳՐԱՆՑՈՒՄ

26. Դոմենային անվան վերագրանցումը Ռեգիստրի տվյալների շտեմարանում գրանցված դոմենային անվան օգտագործման նոր ժամկետի մուտքագրումն է: Ռեգիստրի տվյալների շտեմարանում գրանցված դոմենային անվան օգտագործման նոր ժամկետը չի կարող մուտքագրվել մեկ տարուց պակաս ժամկետով:

27. Դոմենային անվան վերագրանցումն իրականացվում է, եթե տվյալ դոմենային անվան Գրանցորդը ցանկանում է շարունակել օգտագործել տվյալ դոմենային անունը:

28. Դոմենային անվան վերագրանցումն իրականացվում է Պահպանման ժամկետի ընթացքում:

29. Մինչև Լրացուցիչ ժամկետը դոմենային անվան վերագրանցման դեպքում դոմենային անվան օգտագործման նոր ժամկետը հաշվարկվում է Լրացուցիչ ժամկետի առաջին օրվանից:

30. Լրացուցիչ ժամկետի ընթացքում դոմենային անվան վերագրանցում իրականացվելու դեպքում մինչև դոմենային անվան վերագրանցում իրականացվելու պահը՝

1) գրանցված դոմենային անունը չի փոխակերպվում ցանցային հասցեների (IP հասցեների),

2) դոմենային անվան վերաբերյալ տեղեկատվությունն անհասանելի է դառնում «Whois» ծառայությունից օգտվելիս, եթե դոմենային անվան վերագրանցումն իրականացվում է Լրացուցիչ ժամկետի վերջին 15 օրվա ընթացքում:

31. Մինչև Պահպանման ժամկետի ավարտը տվյալ դոմենային անվան վերագրանցում չիրականացվելու դեպքում գրանցված դոմենային անունը հեռացվում է Ռեգիստրի տվյալների շտեմարանից՝ դառնալով գրանցման համար ազատ դոմենային անուն՝ սույն քաղաքականությամբ ամրագրված սահմանափակումները հաշվի առնելով:

32. Դոմենային անվան վերագրանցումը մեկանգամյա գործողության կատարում է:

**11. ԳՐԱՆՑՈՐԴԻ ՆԱԽԱՁԵՆՈՒԹՅԱՄԲ ԳՐԱՆՑՈՐԴԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՈՄԵՆԱՅԻՆ ԱՆՎԱՆ ԳՐԱՆՑՈՒՄԸ**

33. Գրանցորդի փոփոխություն կատարելու նպատակով Ռեգիստրի տվյալների շտեմարանում գրանցված՝ տվյալ դոմենային անվան նոր գրանցումն իրականացվում է այդ դոմենային անվան Գրանցորդի նախաձեռնությամբ՝ դոմենային անվան օգտագործման ժամկետի ընթացքում:

34. Գրանցորդի նախաձեռնությամբ Գրանցորդի փոփոխություն կատարելու նպատակով դոմենային անվան նոր գրանցում իրականացնելու համար, ի լրումն տվյալ դոմենային անվան Գրանցորդ դառնալու ցանկություն ունեցող քաղաքացիաիրավական պայմանագիր կնքելու իրավասությամբ օժտված սուբյեկտի հետ կնքված «.am» կամ «.hայ» դոմենային անունների տիրույթում դոմենային անունների գրանցման ծառայությունների մատուցման վերաբերյալ պայմանագրի առկայության, պարտադիր նախապայմաններ են՝

1) տվյալ դոմենային անվան Գրանցորդի ստորագրված դիմումը՝ Ռեգիստրի տվյալների շտեմարանում Գրանցորդի փոփոխություն կատարելու մասին,

2) տվյալ դոմենային անվան Գրանցորդ դառնալու ցանկություն ունեցող քաղաքացիաիրավական պայմանագիր կնքելու իրավասությամբ օժտված սուբյեկտի ստորագրված դիմումը՝ տվյալ դոմենային անվան Գրանցորդ դառնալու մտադրության մասին,

3) տվյալ դոմենային անվան Գրանցորդի հետ կնքված՝ այդ դոմենային անվան գրանցման ծառայությունների մատուցման վերաբերյալ պայմանագրի լուծումը:

35. Գրանցորդի նախաձեռնությամբ Գրանցորդի փոփոխություն կատարելու նպատակով դոմենային անվան նոր գրանցումն իրականացվում է այն Ռեգիստրարի կողմից, որը Ռեգիստրի տվյալների շտեմարանում գրանցել է (վերագրանցել է) այդ դոմենային անունը:

36. Գրանցորդի նախաձեռնությամբ Գրանցորդի փոփոխություն կատարելու նպատակով դոմենային անվան նոր գրանցումն իրականացվում է սույն քաղաքականության 7-րդ գլխի համաձայն:

37. Եթե տվյալ դոմենային անվան Գրանցորդը Ռեգիստրարն է, ապա Գրանցորդի նախաձեռնությամբ Գրանցորդի փոփոխության համար սույն քաղաքականության 34-րդ կետի 1-ին և 3-րդ ենթակետերով նախատեսված պայմանները չեն գործում՝ պայմանով, որ տվյալ դոմենային անվան գրանցումն իրականացվել է անձամբ այդ Ռեգիստրարի կողմից:

38. Եթե տվյալ դոմենային անվան Գրանցորդ դառնալու ցանկություն ունեցող քաղաքացիաիրավական պայմանագիր կնքելու իրավասությամբ օժտված սուբյեկտը Ռեգիստրարն է, ապա Գրանցորդի նախաձեռնությամբ Գրանցորդի փոփոխության հա-

մար սույն քաղաքականության 34-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված պայմանը չի գործում՝ պայմանով, որ դոմենային անվան գրանցումն իրականացվելու է անձամբ տվյալ Ռեգիստրարի կողմից: Այս դեպքում չի պահանջվում նաև տվյալ դոմենային անվան Գրանցորդ դառնալու ցանկությունն ունեցող քաղաքացիաիրավական պայմանագիր կնքելու իրավասությամբ օժտված սուբյեկտի հետ կնքված «.am» կամ «.հայ» դոմենային անունների տիրույթում դոմենային անունների գրանցման ծառայությունների մատուցման վերաբերյալ պայմանագրի առկայությունը:

12. ՌԵԳԻՍՏՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

39. Իր կողմից դոմենային անուն գրանցելու՝ սույն քաղաքականությամբ սահմանված դեպքերում Ռեգիստրը պարտավոր է ձեռնարկել ողջամիտ միջոցներ՝ Գրանցորդի կողմից ներկայացված տվյալների իսկությունը ստուգելու համար: Ռեգիստրը պատասխանատվություն չի կրում, եթե իրեն ներկայացված տվյալների իսկությունը հնարավոր չէր ստուգել ողջամիտ ջանքերի գործադրմամբ:

40. Գրանցորդի կողմից ներկայացված՝ Ռեգիստրի տվյալների շտեմարանում դոմենային անվան գրանցման (վերագրանցման) համար անհրաժեշտ տեղեկությունները պետք է փոխանցվեն Ռեգիստրին:

Իր և իր Գրանցորդների միջև կնքված պայմանագրերով յուրաքանչյուր Ռեգիստրար պարտավոր է ապահովել, որպեսզի Գրանցորդները ներկայացնեն՝

- 1) տվյալ դոմենային անվան և դոմենային անվան աշխատունակությունն ապահովելու համար անհրաժեշտ տեղեկությունները Ռեգիստրին փոխանցելու համաձայնություն,
- 2) իրենց վարչական, ֆինանսական և տեխնիկական կոնտակտների համաձայնությունները՝ վերջիններիս Անձնական տվյալները Ռեգիստրին փոխանցելու վերաբերյալ (սույն քաղաքականությամբ որոշված սահմաններում):

Ռեգիստրն իրավունք ունի հրապարակել Ռեգիստրի տվյալների շտեմարանում գրանցված (վերագրանցված) դոմենային անունը և դոմենային անվան աշխատունակությունն ապահովելու համար անհրաժեշտ տեղեկությունները «Whois» ծառայության միջոցով: Տվյալ դոմենային անվան Գրանցորդի պահանջով դոմենային անվան աշխատունակությունն ապահովելու համար անհրաժեշտ՝ սույն քաղաքականության 18-րդ կետի 1-3-րդ ենթակետերում նշված տեղեկությունները Ռեգիստրի կողմից «Whois» ծառայության միջոցով չեն հրապարակվում:

Իր և իր Գրանցորդների միջև կնքված պայմանագրերով յուրաքանչյուր Ռեգիստրար պարտավոր է ապահովել, որպեսզի Գրանցորդները ներկայացնեն՝

- 1) սույն քաղաքականության 18-րդ կետի 1-3-րդ ենթակետերում նշված տեղեկությունները «Whois» ծառայության միջոցով հրապարակելու կամ չհրապարակելու վերաբերյալ իրենց դիրքորոշումը,

2) իրենց վարչական, ֆինանսական և տեխնիկական կոնտակտների՝ սույն քաղաքականության 18-րդ կետի 3-րդ ենթակետում նշված տեղեկությունները (յուրաքանչյուրն իրեն վերաբերող տեղեկությունների մասով) «Whois» ծառայության միջոցով հրապարակելու կամ չհրապարակելու վերաբերյալ դիրքորոշումը:

Ռեգիստրի պահանջով Ռեգիստրարը պարտավոր է ներկայացնել ապացույցներ՝ Գրանցորդի (վերջինիս վարչական, տեխնիկական և ֆինանսական կոնտակտների)՝ սույն կետով նախատեսված համաձայնությունների և դիրքորոշումների վերաբերյալ:

(40-րդ կետը խմբ. 25.05.18թ. N15L հրաման)

41. Ռեգիստրարների կողմից Ռեգիստրի տվյալների շտեմարանում դոմենային անունների գրանցման դեպքում Ռեգիստրը պատասխանատվության չի կրում այդ գրանցումների, այդ թվում նաև՝ Գրանցորդի կողմից ներկայացված տվյալների իսկության համար և պարտավոր չէ ստուգել այդ տվյալների իսկությունը:

42. Ամեն դեպքում, Ռեգիստրը պատասխանատվություն չի կրում.

1) Ռեգիստրարների գործողությունների համար,

2) գրանցված դոմենային անվան միջոցով տարածվող նյութերի բովանդակության (content) համար:

13. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄ

43. Սույն քաղաքականության վրա տարածվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը:

44. Սույն քաղաքականության (այդ թվում՝ դոմենային անվան գրանցման, վերագրանցման, Գրանցորդի նախաձեռնությամբ Գրանցորդի փոփոխություն կատարելու նպատակով դոմենային անվան նոր գրանցման, դոմենային անվան գրանցման մերժման, դոմենային անվան գրանցումը (վերագրանցումը) չեղյալ ճանաչելու, Ռեգիստրի, Ռեգիստրարների և Գրանցորդների իրավունքների, պարտականությունների և պատասխանատվության, սույն քաղաքականության կետերի մեկնաբանման, խախտման, անվավերության և այլնի) հետ կապված ցանկացած վեճ պետք է վերջնականորեն լուծվի արբիտրաժի միջոցով՝ «Դոմենային անունների վեճերի լուծման արբիտրաժ» հիմնադրամի կողմից՝ համաձայն «Դոմենային անունների վեճերի լուծման արբիտրաժի կանոններ»-ի (այսուհետ՝ **Կանոններ**): Ռեգիստրը, Ռեգիստրարները, Գրանցորդները և սույն քաղաքականությանն առնչվող այլ անձինք պարտավորվում են ենթարկվել Կանոններին: Արբիտրաժի կազմը և արբիտրների քանակը որոշվում է՝ համաձայն Կանոնների: Արբիտրաժի վայրը՝ քաղաք Երևան, Հայաստանի Հանրապետություն, արբիտրաժի լեզուն՝ հայերեն: Կանոնների համաձայն իրականացված արբիտրաժի վճիռը վերջնական է, պարտադիր և կիրառման ենթակա Ռեգիստրի, Ռեգիստրարների, Գրանցորդների և սույն քաղաքականությանն

առնչվող այլ անձանց կողմից և, կամավոր չկատարվելու դեպքում, պարտադիր կատարման համար կարող է հանձնվել ցանկացած իրավասու դատարան:

14. ԴՈՄԵՆԱՅԻՆ ԱՆՎԱՆ ԳՐԱՆՑՈՒՄԸ (ՎԵՐԱԳՐԱՆՑՈՒՄԸ) ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱՉԵԼԸ

45. Դոմենային անվան գրանցումը (վերագրանցումը) ենթակա է չեղյալ ճանաչման Ռեգիստրի կողմից՝

1) եթե պարզվում է, որ դոմենային անվան գրանցման (վերագրանցման) նպատակով Գրանցորդի կողմից ներկայացված տեղեկությունները (կամ դրանց մի մասը) կեղծ են,

2) եթե տվյալ դոմենային անվան գրանցման (վերագրանցման) նպատակով Գրանցորդի կողմից ներկայացված տեղեկությունները թերի են, և Գրանցորդը, ի պատասխան այդ դոմենային անվան գրանցումն (վերագրանցումն) իրականացրած Ռեգիստրարի կամ Ռեգիստրի կողմից պատշաճ կարգով կատարված հարցմանը, երկու ամսվա ընթացքում համապատասխանաբար դոմենային անվան գրանցումն (վերագրանցումն) իրականացրած Ռեգիստրարին կամ Ռեգիստրին չի տրամադրում անհրաժեշտ լրացուցիչ տեղեկությունները,

3) եթե տվյալ դոմենային անվան Գրանցորդը երկու ամսվա ընթացքում չի պատասխանել այդ դոմենային անվան գրանցումն (վերագրանցումն) իրականացրած Ռեգիստրարի կողմից Գրանցորդի նույնականացման վերաբերյալ պատշաճ կարգով կատարված հարցմանը,

4) եթե տվյալ դոմենային անվան Գրանցորդը Ռեգիստրից պահանջել է Ռեգիստրի տվյալների շտեմարանից հանել դոմենային անվան աշխատունակությունն ապահովելու համար անհրաժեշտ տեղեկությունները, **(4-րդ ենթակետը խմբ. 25.05.18թ. N15L հրաման)**

5) եթե տվյալ դոմենային անվան Գրանցորդի վարչական, ֆինանսական և տեխնիկական կոնտակտներից առնվազն մեկը պահանջել է Ռեգիստրի տվյալների շտեմարանից հանել իր Անձնական տվյալները, իսկ Գրանցորդը, այդ դոմենային անվան գրանցումն (վերագրանցումն) իրականացրած Ռեգիստրարի կամ Ռեգիստրի կողմից պատշաճ կարգով կատարված հարցմանը ի պատասխան, երկու ամսվա ընթացքում չի ներկայացրել իր նոր համապատասխան կոնտակտ(ներ)ի տվյալները, **(5-րդ ենթակետը փոփոխ. 25.05.18թ. N15L հրաման)**

6) բացառիկ դեպքերում՝ սույն քաղաքականության խախտման համար:

Սույն կետի 1-5-րդ ենթակետերով նախատեսված դեպքերում գրանցված դոմենային անունը Ռեգիստրի կողմից ենթակա է չեղյալ ճանաչման՝ համապատասխան հիմքն առաջանալու պահից սկսած՝ 7 աշխատանքային օրվա ընթացքում:

46. Դոմենային անվան գրանցումը (վերագրանցումը) ենթակա է չեղյալ ճանաչման սույն քաղաքականությամբ սահմանված արբիտրաժի կողմից՝

1) սույն քաղաքականության խախտման դեպքերում,

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում,

3) Ռեզիստրի կողմից ընդունված այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերում,

4) *(4-րդ ենթակետն ուժը կորց. 25.05.18թ. N16L հրաման),*

5) եթե շահագրգիռ անձն ապացուցում է, որ ինքն ունի տվյալ դոմենային անվան Գրանցորդ հանդիսանալու նախապատվության իրավունք՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն իրավական պաշտպանության ենթակա ֆիրմային անվանման, ապրանքային նշանի, ծագման տեղանվան, աշխարհագրական նշման կամ երաշխավորված ավանդական արտադրանքի անվանման ուժով, իսկ տվյալ դոմենային անվան Գրանցորդը չի ներկայացնում որևէ համարժեք փաստարկ,

6) եթե շահագրգիռ անձն ապացուցում է, որ Գրանցորդի անվամբ դոմենային անվան գրանցումը հակասում է գործարար շրջանառության սովորույթներին կամ խախտում է Գրանցորդի և շահագրգիռ անձի միջև կամ վերջիններիս և սպառողների միջև բարեխղճության, ազնվության, արդարության, ճշմարտության և անաչառության սկզբունքները, կամ հասարակության մեջ առաջացնում է կամ կարող է առաջացնել շփոթություն/մոլորություն՝ շահագրգիռ անձի և Գրանցորդի գործունեության (այդ թվում՝ նրանց կողմից առաջարկվող ապրանքների/ծառայությունների) կապակցությամբ, իսկ դոմենային անվան Գրանցորդը ողջամիտ ժամկետում չի ներկայացնում որևէ ողջամիտ հակափաստարկ,

7) արբիտրաժի կողմից որոշված այլ դեպքերում:

Դոմենային անվան գրանցումը (վերագրանցումը) սույն քաղաքականությամբ սահմանված արբիտրաժի կողմից չեղյալ ճանաչվելու դեպքում դոմենային անունը հեռացվում է Ռեզիստրի տվյալների շտեմարանից:

15. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՍ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼԸ, ԴՐԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼԸ

47. Ռեզիստրն իրավունք ունի ցանկացած ժամանակ փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարել սույն քաղաքականության մեջ, դադարեցնել սույն քաղաքականության գործողությունը, սահմանել դոմենային անունների գրանցման նոր քաղաքականություն:

48. Ռեզիստրի կողմից սույն քաղաքականության մեջ փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու կամ սույն քաղաքականության գործողության դադարման, կամ դոմենային անունների գրանցման նոր քաղաքականության սահմանման մասին ընդունված իրավական ակտը, որպես կանոն, ուժի մեջ է մտնում այն ընդունելուց 30 օր հետո, եթե այդ իրավական ակտով այլ բան սահմանված չէ:

49. Ռեզիստրը սույն քաղաքականության մեջ փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու կամ սույն քաղաքականության գործողության դադարման, կամ դոմենային անունների գրանցման նոր քաղաքականության սահմանման մասին իրավական

ակտն ընդունելուց հետո ողջամիտ ժամկետներում գրավոր կամ էլեկտրոնային փոստով իրազեկում է այդ մասին Ռեգիստրարներին:

16. ԵԶՐԱՓՄԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

50. Սույն քաղաքականությամբ սահմանված ժամկետների հաշվարկման համար հիմք է ընդունվում Երևանյան ժամանակը (UTC+04:00 ժամային գոտի):

51. Ռեգիստրն առաջնորդվում է www.isoc.am, www.itc.am և www.amnic.net ինտերնետային կայքերում հրապարկված տառադարձման աղյուսակներով:

52. Գրանցորդի վարչական կոնտակտից ստացված էլեկտրոնային նամակը համարվում է Գրանցորդի կողմից ուղարկված պաշտոնական դիմում:

53. Գրանցորդին ուղարկված պատշաճ կարգով կատարված հարցում է համարվում Գրանցորդի վարչական կոնտակտի էլեկտրոնային հասցեին ուղարկված հարցումը, որը փոստով (պատվիրված նամակով) ուղարկվել է նաև Գրանցորդ ֆիզիկական անձի հաշվառման կամ բնակության վայրի, իսկ ֆիզիկական անձ չհանդիսացող Գրանցորդի դեպքում՝ վերջինիս գտնվելու վայրի հասցեով: Եթե Գրանցորդ ֆիզիկական անձը չի լիազորել այլ անձի հանդես գալու որպես իր վարչական կոնտակտ, ապա հարցումն ուղարկվում է Գրանցորդ ֆիզիկական անձի էլեկտրոնային հասցեով:

54. Դոմենային անվան գրանցումը (վերագրանցումը) չեղյալ ճանաչվելու դեպքում Ռեգիստրարն իրավունք չունի նույն Գրանցորդի անունով տվյալ դոմենային անվան գրանցում կատարել, եթե չեն վերացել դոմենային անվան գրանցումը (վերագրանցումը) չեղյալ ճանաչելու հիմքերը:

17. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

55. «.am» կամ «.հայ» վերջավորությանը նախորդող հատվածում մեկ գրանշան պարունակող երկրորդ մակարդակի դոմենային այն անունները, որոնց Գրանցորդներ սույն քաղաքականության ուժի մեջ մտնելու պահին հանդիսանում են քաղաքացիաիրավական պայմանագիր կնքելու իրավասությամբ օժտված այլ սուբյեկտներ, Ռեգիստրի կարիքների համար նախատեսված դոմենային անունների ցանկում ներառման ենթակա են գրանցման համար ազատ դառնալու պահից: